ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<u>Հետազոտության թեման՝</u>

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

<u>Հետազոտող ուսուցիչ՝</u> Ալեքյան Անահիտ

<u>Դպրոց՝</u> ք. Երևան Խ. Սամուելյանի անվան հ. 47 միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Նախաբան..... 3
Գրականության ակնարկ..... 4
Գործնական համատեքստ 6
Հետազոտության ընթացք..... 8
Տվյալների մշակում և վերլուծություն..... 12
Ամփոփում 14
Օգտագործված գրականություն 16

Նախաբան

Թեմայի արդիականությունը:

Ներկայումս զգալի դեր աճող սերնդի դաստիարակության պրոցեսում տրվում է ընտանիքի և դպրոցի համագործակցությանը: Ընտանիքը պետք է օգնի դպրոցին՝ հաջող իրականացնելու կրթությունը: Բայց ներկայումս սոցիալական դաստիարակությանը և դպրոցական ադապտացիային խանգարում է ծնողների կողմից մանկավարժական հիմունքների թույլ իմացությունը, նրանց անկարողությունը, բայց երբեմն ծնողներին մեղադրելը ևս անիմաստ է: Այդ պատճառով այժմ հարկավոր է խորացնել դպրոցի և ընտանիքի փոխազդեցությունը, բարձրացնել ծնողների պատասխանատվությունը երեխաների դաստիարակության համար: Եվ կազմակերպել այդ աշխատանքը պարտավոր է դպրոցը: Դրա հետ կապված աճում է ուսուցչի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի աշխատանքի նշանակությունը դպրոցում այդ գործունեությունը կազմակերպելիս, որից կախված է շատ խնդիրների և հարցերի լուծումը:

Ուսուցիչը միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներին զննում է գիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Ուսուցիչը մանկավարժական գիտության կրողն է: Նրա միջոցով են իրականացվում մանկավարժության նվաճումների ներդրումները: Ուսուցչի դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին

վերցրած յուրաքանչյուր մարդու անձի զարգացման և ձևավորման համար: Ահա

թե ինչու չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին ասում էր. Արևի տակ ուսուցչի մասնագիտությունից բարձր մասնագիտություն չկա: Ուսուցիչը կրտսեր դպրոցականի, դեռահասի պատանու, երիտասարդի հոգեկան աշխարհի կերտողն է:

Մանկավարժի վարպետությունը որպես դասարանի ղեկավարի արտահայտվում է նախ և առաջ սովորողների հետ նրա շփման բնագավառում: Տվյալ խնդրի կարևոր ասպեկտ համարվում է հարցը դասարանի ղեկավարի անհատական ոճի մասին:

Գրականության ակնարկ

Երեխաների ընտանեկան դաստիարակության պրոցեսի կազմակերպման մեջ դպրոցի դերի մասին խոսել է դեռ Ա. Ս. Մակարենկոն. Լինում են լավ և վատ ընտանիքներ: Ասել, որ ընտանիքը կարող է դաստիարակել այնպես, ինչպես ուզում է, մենք չենք կարող: Մենք պետք է կազմակերպենք ընտանեկան դաստիարակություն, և կազմակերպիչ սկիզբ պետք է լինի դպրոցը, ինչպես պետական դաստիարակության ներկայացուցիչ:

Հենց այդ դիրքից էլ սահմանվում են դպրոցի մանկավարժների աշխատանքի հիմնական խնդիրները կրտսեր դպրոցակլանների ծնողների հետ.

-Ծնողների սիստեմատիկ բազմակողմյա մանկավարժական լուսավորում, այսինքն նրանց ծանոթացումը ինչպես տեսական գիտելիքների, այնպես էլ սովորողների հետ գործնական աշխատանքի հետ:

-Ծնողների ընդգրկումը ակտիվ մասնակցությանը ուսումնակրթական պրոցեսում:

-Ծնողների մոտ պահանջների ձևավորում ինքնակրթության համար:

-Ուսուցիչներին ծանոթացումը ընտանեկան դաստիարակության մեթոդների հետ, լավագույն փորձի ընտրում և ընդհանրացում:

Այդ բավական մեծ և պատասխանատու աշխատանքի իրականացման դեպքում հաշվի են առնվում խնդիրները, որոնք ներկայացվում են հանրության առջև հենց կյանքի կողմից. փոքր ընտանիքը, նրանում մեկ երեխայի դաստիարակությունը, երիտասարդ զույգերի առանձին ապրելը և այդտեղից՝ ընտանեկան ավանդույթների վատնումը, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանցման բարդությունը, ոչ լիարժեք ընտանիքի ազդեցության առանձնահատկությունը, երեխաների հետ ծնողների շփման անբավարարությունը, կապված ծնողների չափազանց զբաղվածության հետ և այլն:

Սահմանելով երեխայի պատրաստումը դպրոցական կրթությանը հասկացությունը, Լ. Ա. Վենգերը նշում է. Պատրաստ լինել դպրոցին՝ չի նշանակում կարողանալ կարդալ, գրել և հաշվել: Պատրաստ լինել դպրոցին՝ նշանակում է պատրաստ լինել սովորել այդ ամենը[1]:

Իսկ ինչը կօգնի երեխային սովորել այդ ամենը: Նախ և առաջ, անհրաժեշտ է մոտիվացիոն պատրաստվածություն դպրոցին, այսինքն երեխաների մոտ ցանկությունը սովորել: Երեխայի մոտիվացիայի մասին ինֆորմացիան կարելի է ստանալ նրան հետևելու ընթացքում՝ այուժետադերային խաղերի պրոցեսում: Դպրոցական ուսուցմանը պատաստ երեխաները նախընտրում են խաղալ աշակերտների դեր, նրանք գրում են, կարդում, լուծում խնդիրներ, պատասխանում են գրատախտակի մոտ

[1] Պոդլասի Ի. Պ. Մանկավարժություն: Մ., 1999թ.

ստանում գնահատականներ: Անպատրաստ երեխաները և առավել փոքրները ընտրում են ուսուցչի դերը, ինչպես նաև կենտրոնանում են դասամիջոցի պահերին, դպրոց գնալու և գալու, ուսուցչին ողջունելու պահերին:

Դպրոցական տարիքում երեխաները մեծ մասն անց են կացնում ուսուցիչների հետ, բայց ոչ պակաս կարևոր դեր դաստիարակության խնդիրների լուծմմ խաղում է ընտանիքը: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման պայմանն է: Ճիշտ է ասել Վ. Ա. Սուխոմլինսկին, որ առանց ընտանիքի, առանց ծնողների օգնության մենք չենք կարող հաղթահարել երեխաների ուսումնասիրությունը, ինչպես նաև մյուս բոլոր գործերը:

Գործնական համատեքստ

Երեխաների կրթության և դաստիարակության համակարգի արդյունավետ իրականացումը ամբողջովին կախված է ուսուցչի անձից: Նախ և առաջ ուսուցիչը պետք է սիրի երեխաներին այնպես, ինչպիսին նրանք կան: Պետք է միանման սիրել և չարաճճիին, և ծույլին, և խելացիին: Բարությունը և սերը երեխաների հանդեպ՝ թույլ չեն տալիս կոպիտը վարվել նրանց հետ, չուրախանալ նրանց հաջողություններով: Երեխաները այժմ մեզ մոտ գալիս են ոչ օրդինար կերպով: Երբեմն նրանք մեզանից ավելի խելացի են: Հարկավոր է կարողանալ հասկանալ երեխաներին, այսինքն գտնվել նրանց դիրքում, ընդունել նրանց հոգսերը և գործերը՝ որպես լուրջ և հաշվի նստել նրանց հետ:

Կյանքի ուրախությունը երեխան զգում է միայն այն դեպքում, երբ դասի ժամանակ իշխում է հոգևոր մտերմությունը ուսուցչի և երեխաների միջև:

Երեխան ամբողջական անձ է և նախ և առաջ հարկավոր է, որպեսզի մանկավարժական գործընթացը գրավի նրան ամբողջությամբ՝ նրա բոլոր կենսական ձգտումների և պահանջների հետ:

Յուրաքանչյուր մարդ կարող է հասնել բարձր վարպետության, այդ պատճառով հարկավոր է մշտապես ձգտել ծնել դաստիարակվողների մեջ ստեղծագործական նախաձեռնություն: Չկան նվիրյալ և ոչ նվիրյալ, տաղանդավոր և անտաղանդ երեխաներ: Հասկանալ, բացահայտել, փայփայել յուրաքանչյուր երեխայի մեջ նրա անկրկնելի անհատական տաղանդը՝ նշանակում է բարձրացնել անձին մարդկային արժանիքի բարձր մակարդակի- ասում է Սուխոմլինսկին:

Երեխաները ցանկանում են արտահայտել իրենց կարողությունները: Նրանք շատ են սիրում երևակայել, ստեղծագործել, պատմել, նկարել:

Անձի ներդաշնակ զարգացումը անհնար է առանց ընտանեկան դաստիարակության, որը պետք է համարվի և ամրապնդվի հասարակության միջոցով: Այժմ հոգեբանները և բժիշկները պնդում են, որ անգամ սիրո շատ կարճ ժամանակով պակասությունը մտավոր, բարոյական և հուզական զարգացման հարցում ծնում են անուղղելի կորուստ մարդու ողջ հաջորդող կյանքի ընթացքում, բացասաբար են ազդում հոգեկան և ֆիզիկական զարգացմանը[2]:

Ընտանեկան դաստիարակությամբ ճիշտ մանկավարժական ղեկավարումը հնարավոր է դաստիարակության կոմպլեքսային մոտեցման պայմանների դեպքում, ջանքերի կոորդինացման ապահովումը դաստիարակության բոլոր ուղիներում՝ գաղափարաքաղաքական, աշխատանքային, բարոյական, էսթետիկ, ֆիզիկական:

Դպրոցի մանկավարժների աշխատանքը ծնողների հետ՝ իրականացվում է երկու ուղղություններով.- ծնողների կոլեկտիվի հետ և առանձին:

Գործնականում ներկայացվել են նրա առավել ռացիոնալ ձևերը՝ ծնողների ընդհանուր և դասարանային ժողովներ, կոլեկտիվ և անհատական կոնսուլտացիաներ, զրույցներ, դասախոսություններ, կոնֆերենցիաներ, սովորողների ընտանիք այցելություններ, տարբեր տիպի և ձևի տեքստային նյութերի ձևակերպում, սովորողների աշխատանքի ներկայացում և այլն:

Ծնողների հետ բարյացակամ շփումների հարթումը կատարվում է ավելի հեշտ, եթե մանկավարժը շփումը կառուցում է նպատակուղղված, հաշվի առնելով իրավիճակը, նախապես մտածում է ոչ միայն զրույցի բովանդակությունը, այլ նաև նրա ընթացքը, հնարավոր տարբերակները և անսպասելի շրջադարձերը: Տալով խորհուրդներ, ձգտելով, եթե հնարավոր է, ներմուծել ուղղումներ երեխաների հանդեպ ծնողների դաստիարակչական ազդեցությունում, հարկավոր է հասկանալ, որ ուղիղ միջամտությունը ընտանիքի ներքին գործերում կարող է առաջացնել ինչպես բողոք և պատճառել դժվար ուղղվող վնաս: Քանզի յուրաքանչյուր ծնող իր երեխաներին դաստիարակում է այնպես, ինչպես անհրաժեշտ է համարում, ելնելով իր գիտելիքներից, կարողություններից, զգացմունքներից և համոզմունքներից:

[2] Անդրեեվա Գ. Մ. Սոցիալական գիտակցման հոգեբանություն: Մ., 1997թ.

Հետազոտության ընթացքը

Ընտանիքի հետ նպատակաուղղված շփման բարձր սոցիալական նշանակությունը կայանում է նրանում, որ ուղղելով ծնողների ազդեցությունը երեխաների հանդեպ, մանկավարժը ազդում է նաև ներընտանեկան հարաբերությունների կառուցմանը, նպաստում ծնողների անձի կատարելագործմանը, այդ կերպ բարձրացնում է բնակչության ընդհանուր կուլտուրայի մակարդակը:

Անհատական աշխատանքը ծնողների և սովորողի ընտանիքի այլ հասուն անդամների հետ բարդ է և բազմազան:

Անհատական աշխատանքի առավելություն համարվում է այն, որ գտնվելով սոցիալական մանկավարժի հետ միասին, ծնողները ակնհայտորեն նրան պատմում են ներընտանեկան հարաբերություններում իրենց խնդիրների մասին, որի մասին երբեք չէին պատմի կողմնակի անձանց: Ծնողների խնդրանքներին հարկավոր է մոտենալ բավական ուշադիր: Չկատարել խնդրանքը կարելի է միայն այն դեպքում, եթե նրա կատարումը կարող է վնաս հասցնել երեխային:

Անհատական շփումը ոչ միայն հնարավորություն է տալիս ուսուցչին ցուցաբերել ազդեցություն ծնողների հանդեպ, այլ նաև իր հերթին, շատ առումներով օգնում է նրան երեխաների հանդեպ ճիշտ մոտեցման ընտրությ ունում[3]:

Շատ բաներ դպրոցի և ընտանիքի հարաբերություններում կախված է առաջին հանդիպումից: Ծնողների հետ հանդիպման առաջին իսկ հանդիպումից պետք չէ խոսել երեխաների հետ աշխատանքի բարդությունների մասին: Հարկավոր է ձգտել, որպեսզի ծնողների մոտ առաջանա վստահություն, որ իրենց որդուն կամ դստերը կկրթեն և կդաստիարակեն որակավորված մանկավարժներ և դրա համար պատրաստված կլինեն բոլոր անհրաժեշտ պայմանները: Դա հատկապես վերաբերվում է առաջին դասարանցիների ծնողներին, քանզի եթե երեխան չի գնացել մանկապարտեզ, նրանք առաջին անգամ են բաժանվում նրանից և շատ են անհանգստանում:

Մեծ հնարավորություն ներկայացնում է աշխատանքը ծնողների կոլեկտիվի հետ՝ լայն մանկավարժական ինֆորմացիա, փորձի փոխանակում, անհրաժեշտ դեպքերում հասարակական կարծիքի ստեղծում, ծնողների ընդգրկումը դպրոցի կյանքի մասնակցությանը: Այդ աշխատանքը անցկացվում է երկու ուղղություններով՝ ծնողների մանկավարժական կուլտուրայի բարձրացում և դրա հետ կապված առավել կատարելագործված դաստիարակչական պարտականությունների կատարում և այլն:

[3] Բոնո Է. Սովորեցրեք ձեր երեխաներին մտածել: Մ., 1998թ.

Ծնողների հետ մանկավարժի անհատական աշխատանքի պրոցեսում մանկավարժին անհրաժեշտ է ոլունենալ մանկավարժական գրադարան, որից կարող են օգտվել ծնողները: Ենելով աշխատանքի պլաններից, ծնողների հետ անհատական զրույցներից, ընտանիք այցելություններից, ծնողական ժողովների աշխատանքի արդյունքներից, մանկավարժը կարող է անցկացնել կոլեկտիվ կոնսուլտացիաներ ծնողների հետ՝ նրանց առավել հուզող հարցերի շուրջ:

Մանկավարժի աշխատանքի պլանում առկա են դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության հետևյալ տեսակները՝ էքսկուրսիաների կազմակերպում տարբեր ձեռնարկություններ, զբոսանքներ քաղաքում, և այլն:

Ծնողների հետ աշխատանքի տեսակները և մեթոդները տարբեր են, բայց գլխավորն այն է, որ մանկավարժին հարկավոր է կատարել ճիշտ ընտրություն, հաշվի առնելով ուսուցիչների աշխատանքի բոլոր առանձնահատկությունները՝ ծնոնղերի տվյալ կոլեկտիվի հետ, դպրոցի աշխատանքի համակարգի առանձնահատկությունները ամբողջությամբ:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ծնողների շփումը ուսուցչի հետ՝ ամենասեղմ և ակտիվն են ավագ դասարանի երեխաների ուսուցիչների համեմատ: Հենց այդ ծնողներն են դառնում ուսուցչի գլխավոր հենարանը:

Երեխայի մուտքը դպրոց բավական պատասխանատու պահ է ինչպես երեխայի, այնպես էլ նրա ծնողների համար: Ուսումնական գործունեության անցավ և հաջող մուտքի համար երեխան պետք է լինի առողջ և ամենկողմյա պատրաստված:

Դպրոցում կրթության սկիզբը ամենաբարդ պահերից մեկն է երեխայի կյանքում, կապված տարբեր տիպի ծանրաբեռնումների հետ՝ սոցիալ- հոգեբանական փոփոխությունները երեխայի կյանքում՝ նոր շփումներ, նոր հարաբերություններ, նոր պարտականություններ, աշակերտի նոր սոցիալական դեր, իր դրական և բացասական կողմերով:

Աշակերտի պարտականությունը երեխայից պահանջում է իր սեփական դերի գիտակցում, ուսուցչի դիրք, հաստատված դիստանցիա հարաբերություններում և կանոններ, ըստ որոնց կառուցվում են այդ հարաբերությունները: Եվ ասյտեղ բավական կարևոր է, թե ինչպես կանցկացվի դպրոցին երեխայի առաջին ադապտացումը, վարքի ինչ գիծ կընդունեն այդ փուլում իրեն ուղեկցող մեծահասակները՝ ուսուցիչները և ծնողները, որքան մատչելի և ինքնաժամանակյա կլինի հնարավորությունը հոգեբանական օգնությանը որոշակի կրիտիկական պահերին:

Պատրաստվածության խնդիրը դպրոցական կրթությանը ուսուցման կարևորագույն սահմաններից մեկն է, որը հետաքրքրում է ինչպես տեսաբաններին, այնպես էլ մանկավարժական և հոգեբանական գիտությունների աշխատողներին:

Դա հիմնավորված է նրանով, որ երեխայի անպատրաստվածությունը դպրոցական կրթությանը առաջացնում է բազում խնդիրներ նրա բոլոր հաջորդող փուլերում:

Ժամանակակից աշխարհում ավելի է աճում ծնողների հասկացությունը որպես որոշիչ ոչ միայն երեխայի զարգացման հարցում, այլ նաև ողջ հանրության զարգացման վերջնական արդյունքում: Ծնողի հետ երեխայի փոխազդեցությունը համարվում է փոխազդեցության առաջիօն փորձը շրջակա աշխարհի հետ: Այդ փորձը ամրապնդում և ձևավորում է վարքի որոշակի մոդելներ այլ մարդկանց հետ, որոնք փոխանցվում են սերնդե սերունդ: Յուրաքանչյուր հանրությունում ձևավորվում է ծնողների և երեխաների միջև որոշակի փոխհարաբերությունների և փոխազդեցությունների որոշակի կուլտուրա, առաջանում են սոցիալական ստերեոտիպեր, որոշակի հաստատումներ հայացքներ ընտանեկան դաստիարակությանը: Ընտանեկան դաստիարակության խնդիրների վերաբերյալ հետաքրքրության աճը կապված է նոր սոցիալ-տնտեսական պայմանների հետ: Ծնողները ունեն որոշակի իրավունքներ.

-Ընտրել և ընտրվել դպրոցի խորհրդում

- ներկայացնել առաջարկներ դպրոցի խորհրդի ուսումնասիրման համար -մասնակցել մանկավարժական կոլեկտիվների գործունեության գնահատականին

-դիմել առաջարկներով՝ լավացնելու մանկավարժական պրոցեսը դպրոցում

-պաշտպանել երեխայի իրավունքները և ընտանիքի պատիվը

-Դիմել հոգեբանին, ադմինիստրացիային՝ վիճելի հարցերի, պրոբլեմային իրավիճակի առումով

-Ընտրել երեխայի ուսուցման պրոֆիլ ծնողների պարտականություններն են.

-Պատասխանատու լինել երեխայի ճակատագրի համար, ստեղծել պայմաններ նրա զարգացման համար

-Լինել ընտանեկան հոգեբան, մանկավարժ և բժիշկ: Իսկ դրա համար այցելել դպրոցի պարապմունքներին և կարդալ գրականություն:

-Գլխավորը ընտանիքում միմյանց հարգանքն է, հետաքրքրությունների և գործերի ընդհանրությունը, համբերատարությունը, յուրաքանչյուրի պաշտպանվածությունը, ինքնագնահատականը:

-Զբաղվել դաստիարակությամբ մշտապես, այլ ոչ թե դեպքից դեպք:

-Սկսել երեխայի դաստիարակությոնը իր իսկ դաստիարակությունից: Դաստիարակությունը դա ոչ թե առանձին բարոյաուսուցումներն ե, այլ ընտանիքի ողջ կենսագործունեությունը:

-Սիրել երեխային և կարողանալ արտահայտել սեփական սերը քնքուշ բառերով և քնքուշ հնչերանգով:

-Երեխային մոտենալ ինչպես հավասարին: Երեխաները երբեք իրենց փոքր չեն

համարում, նրանք միշտ էլ մեծ են:
-Երեխաների մեջ դաստիարակել ինքնուրույնություն:

Տվյալների մշակում և վերլուծություն

Ծնող-դպրոց-աշակերտ համակարգում ծնողը համարվում է հիմնական ճյուղ և նրանից է մեծամասամբ կախվախ, թե ինչպես կդասավորվեն այդ հարաբերությունները: Դա ապահովում է հասակացություն և ավելի լավ փոխազդեցություն, քանի որ խախտված հարաբերությունների դեպքում ընտանիքում դաստիարակչական ֆունկցիաների իրականացման հարցը բավական պրոբլեմատիկ է:

Սա վկայում է այն մասին, որ կրթության բարձր որակը որպես դպրոցի ընտրության կարևոր գործոն համարվում է հիմնական: Բարձր նշանակություն տրվում է նաև երեխայի այցելության հարմարավետությանը: Քանի որ այդ երկուսի սանդղակը բարձր է, քան դպրոցի հարմար դիրքի սանդղակը, խոսում է այն մասին, որ ներկայիս առաջին դասարանցիների ծնողները իրոք ակտիվորեն իրականացնում են իրենց իրավունքը կրթական հաստատության ընտրությանը: Առավել զգալի գործոն դպրոցի ընտրության համար համարվում է առաջին ուսուցչուհու անձը, մինչդեռ փոփոխականության անալիզի ցուցանիշը ցույց է տալիս, որ որոշ դասարաններ ձևավորվել են հենց կոնկրետ ուսուցչին հրապուրանքի արտահայտման սկզբունքով:

Ծնողները ուղղակիորեն կրթության որակը կապում են մանկավարժների բարձր պրոֆեսիոնալիզմի հետ, ուսուցչի կարողությամբ՝ որակապես ներկայացնել ուսումնական ծրագիրը: Միևնույն ժամանակ նրանք չեն գրանցում կրթության բովանդակալից ասպեկտը, ուսումնական առարկաների ընտրությունը, ինչից կարելի է եզրակացնել, որ այդ ասպեկտը (կրթության բովանդակությունը) նրանց համար չի համարվում պրոբլեմային: Միայն քիչ թվով ծնողներ են համարում, որ կրթությունը պետք է երեխային տա նորարարություններ կիրառելու ստացված գիտելիքները կյանքում: Որակյալ կրթության բնութագիրների նման հարաբերությունը ծնողների հասկացությունում՝ վկայում է կրթության որակի ըմբռնման ավանդական պարադիգմի գերիշխման մասին:

Ծնողների ոչ պակաս մասը համարում է, որ որակյալ կրթությունը պետք է ապահովի սովորողի ամենկողմյա զարգացում, աշխատելու հեռանկարներում՝ պատրաստել երեխային ընդունվել բուհ, օգնել նրան գտնելու հեռանկարային աշխատանք, և այլն: Ծնողներից ոմանք դպրոց երեխայի մուտք գործելու հարմարավետությունը կապում են լավ սանիտարա՛հիգիենիկ պայմանների հետ: Նկարում ներկայացված է դպրոց երեխայի

գալու հարմարավետությունը:

Հարկավոր է նշել, որ դպրոցի ընդհանուր դրական հուզական գնահատականի դեպքում առաջին դասարանցի ծնողների կողմից նորարարությունները հուզականորենից կարելի է եզրակացնել, որ ծնողները, ովքեր ընտրում են նորարարական տիպի դպրոցը, առավել օպտիմալ և առավել էնտուզիազմով են վերաբերվում դպրոցական կրթությանը:

Ամփոփում

Տվյալ հետազոտության ընթացքում ներկայացվել են խնդիրներ, որոնք որոշվել են տվյալ թեմայի վերաբերյալ գրականության ուսումնասիրման օգնությամբ և համապատասխան մեթոդիկաների կիրառմամբ:

Գրականության բերված անալիզը դպրոցական կրթությանը երեխայի ադապտացման հարցի վերաբերյալ, ընտանեկան դաստիարակության և դպրոցի ու ընտանիքի բնորոշ գծերը վկայում են անցկացված հետոազոտության ակտուալության մասին: Հետազոտության մշակված ծրագիրը թույլ է տվել արտահայտել և ապիզի ենթարկել դպրոցական կրթությանը երեխայի ադապտացիայի առանձնահատկությունները: Ծնողների ընդգրկումը ակտիվ մասնակցությանը երեխայի ադապտացման խնդրին, օգնել է արտահայտել կրտսեր դպրոցականների հոգեբանական դրության առանձնահատկությունները ադապտացիայի ընթացքում, սովորողների ֆիզիկական վիճակի փոփոխությունների բնույթը, բնութագրել ուսուցչի գործունեության ազդեցությունը և միմյանց հետ սովորողների փոխազդեցության բնույթը, այս կերպ հիմնավորելով սովորողների յուրացման պրոցեսի առանձնահատկությունները նոր տիպի գործունեությանը:

Հետազոտության արդյունքների սահմանումը, ստացված փորձից առաջ և հետո, սահմանել է դպրոցի և ընտանիքի փոխազդեցության արդյունավետության աստիճանը դպրոցական կրթությանը երեխայի ադապտացիայի պրոցեսում:

Ընտանիքի հետ նպատակաուղղված շփման բարձր սոցիալական նշանակությունը կայանում է նրանում, որ ուղղելով ծնողների ազդեցությունը երեխաների հանդեպ, մանկավարժը ազդում է նաև ներընտանեկան հարաբերությունների կառուցմանը, նպաստում ծնողների անձի կատարելագործմանը, այդ կերպ բարձրացնում է բնակչության ընդհանուր կուլտուրայի մակարդակը:

Անհատական աշխատանքը ծնողների և սովորողի ընտանիքի այլ հասուն անդամների հետ բարդ է և բազմազան:

Անհատական աշխատանքի առավելություն համարվում է այն, որ գտնվելով սոցիալական մանկավարժի հետ միասին, ծնողները ակնհայտորեն նրան պատմում են

ներընտանեկան հարաբերություններում իրենց խնդիրների մասին, որի մասին երբեք չէին պատմի կողմնակի անձանց: Ծնողների խնդրանքներին հարկավոր է մոտենալ բավական ուշադիր: Չկատարել խնդրանքը կարելի է միայն այն դեպքում, եթե նրա կատարումը կարող է վնաս հասցնել երեխային:

Անհատական շփումը ոչ միայն հնարավորություն է տալիս ուսուցչին ցուցաբերել ազդեցություն ծնողների հանդեպ, այլ նաև իր հերթին, շատ առումներով օգնում է նրան երեխաների հանդեպ ճիշտ մոտեցման ընտրությունում:

Կցանկանայի նաև նշել, որ տվյալ հարցը, կապված իր արդիականության հետ, պահաջում է այդ սահմանում հետազոտությունների շարունակություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրամովա Գ. Ս. Տարիքային հոգեբանություն: Մ., 2001թ.
2. Անդրեեվա Գ. Մ. Սոցիալական գիտակցման հոգեբանություն: Մ., 1997թ.
3. Բոնո Է. Սովորեցրեք ձեր երեխաներին մտածել: Մ., 1998թ.
4. Գրեբենշչիկով Ի. Վ. Դպրոցը և ընտանիքը: Մ., 1985թ.
5. Պոդլասի Ի. Պ. Մանկավարժություն: Մ., 1999թ.
6. Սուխոմլինսկի Վ. Ծնողական սիրո խելացիությունը: Մ., 1990թ.